Ը. ՏԱՐԻ — ՇԱԲԱԹ 4 ՅՈՒՆԻՍ 1905 — ԹԻՒ 719

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Բուլղարիոյ համար
տարեկան 12 ֆր.
վեցամսեայ 6 »
Արտասահմանի
համար տարեկան 15 »
վեցամսեայ 8 »
Ամերիկայի համար
տարեկան 3 տլր.
վեցամսեայ 1.50 »

Յայտարարութեան տողը առաջին երեսին համար 40 ս. իսկ վերջին երեսին համար 20 սանթիմ և երկրեն աւելի անգամներու համար 20 0/0 զեղչ կըլլայ։

—o—

Վառնայի համար
ձեռքէ 10 սանթիմ

ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Отговорникъ СТЕПАНЪ КАНАРЯНЪ

...ակ է դրամ ղրկել ...ագ ուրեամս համ... ...երն

Редакция на вѣстникъ
„Шаржумъ“
Варна

Redaction du journal
„Char,oum“
(Bu|garie) Yarna

Բուլկարիոյ համար
ձեռքէ
15 ՍԱՆԹԻՄ

Արտասահմանի համար
ձեռքէ
20 ՍԱՆԹԻՄ

—o—

Գրութիւնք ետ չեն
տրուիր

«ՇԱՐԺՈՒՄ Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԷՏՔ Է ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԷ»

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱԶԴԵՐ

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԲԱԳՈՒԻ ԿԵՆՏՐՈՆ. ԿՈՄԻՏԷԻ

Ռումբը խօսեց։

Դաշտւած հայ ժողովրդի վրէժի որոտաձայն խօսքն էր այն։

Հրէշը, որ քամեց մեր սրտի արիւնը, ողորմելի դիակ է հիմա։

Փետրուարի 6—9ին նահատակուած մեր սիրելիների հոգիները թող հանգիստ առնեն այժմ։

Ռումբը դատեր շատ ունի դեռ և վա՜յ նրանց, որոնք կը կամենան այսուհետեւ յօշոտել հայ ժողովուրդը։

Կորչի՛ բռնակալութիւնը,

Կեցցէ՜ Կովկասեան ժողովուրդների եղբայրութիւնը,

Կեցցէ՜ ազատ դաշնակցական կառավարութիւնը։

—○○—

Քաղաքացինե՛ր

Չորեքշաբթի, մայիս 11ին, ցերեկուայ ժամը 3ին, քաղաքի կենտրոնում, Պարապետի վրայ, Բագուի նահանգապետ իշխան Նակաշիձէն մահուան պատժի ենթարկուեց։

Հ. Յ. Դաշնակցութիւնը նրան դատապարտել էր մահուան իբրեւ փետրուարի 6—9ի արիւնոտ օրերի գաղտնի կազմակերպիչը եւ հեղինակը։ Այս վճիռը իր ժամանակին հաղորդուած էր դատապարտուածին։ Նոյն վճիռը արձակուած էր նաեւ Բագւում գործող միւս յեղափոխական կազմակերպութիւնների կողմից՝ առանց ազգութեան և կուսակցական խտրութեան։ Վճիռը ի կատար ածուեց Դաշնակցութեան կողմից, որ այս պարագայում առաւելագոյն իրաւատէրն է հասարակական վրէժխնդրութեան։

Իշխան Նակաշիձէի կրած պատիժը թող չշփոթեցնէ ոչ ոքին։ Դա մի արդար հատուցումն է մի գազիր ոճիրի—կանգնեցնել հայութեան դէմ և կազմակերպել մասսային կոտորած՝ խաղաղ ժողովուրդը ահաբեկելու նպատակով։ Իշխան Նակաշիձէն մարդասպան էր և դաւաճան։ Նա մատնեց իր պահպանութեան յանձնուած քաղաքը հրոսակների և աւարառուների և դրեց մարդասպանների ձեռքը մահացու զէնքեր, և այդ զէնքերը թաթախեց հարիւրաւոր անմեղների արիւնով։ Մահապարտ Նակաշիձէն պարտաւոր էր կնքել իր եղեռնալի կեանքը անարգ մահով։ Այդ էր պահանջում հասարակական վրդովուած խիղճը և Հ. Յեղ. Դաշնակցութիւնը դրա արտայայտիչը հանդիսացաւ։

Հրաւիրում ենք ձեզ, քաղաքացինե՛ր, խաղաղութեան եւ անդորրութեան։ Մի՛ կորցնէք ձեր սառնասրտութիւնը։ Իշխան Նակաշիձէն պատժւեց իբրեւ եղեռնագործ, որի ճակատին արդէն դրոշմուած էր հասարակաց անարգանքը և որ դատապարտուած էր հասարակական դատաստանով։

Պարապետի վրայ պայթած ռումբը թո՛ղ չներշնչի ձեզ երկիւղ վաղուայ համար։ Այդ ռումբը ուղղուած է մի սրիկայի դէմ որ սերմանում էր ազգաբնակութեան դէմ ատելութիւն և երկպառակութիւն, որ ձեր և մեր թշնամին էր, որ կոտորեց ձեր որդկերանց, հայրերին մայրերին, եղբայրներին և քոյրերին։

«Դրօշակ»

ԿԱԼԱԵՎԻ ՆԱՄԱԿԸ

—○○—

Իմ սիրելի բարեկամներ եւ անմոռանալի ընկերներ

Դուք գիտէք, ես արի, ինչ որ կարող էի անել՝ փետր. 4ին յաղթանակը ձեռք բերելու համար։ Ես իմ անհատական զգացումների սահմաններում—երջանիկ եմ, գիտակցելով, որ կատարեցի այն պարտքը, որ ծանրացած էր ամբողջ արիւնոտւող Ռուսաստանի վրայ։

Դուք գիտէք իմ համոզմունքներն ու իմ զգացումների ուժը և թող ոչ ոք չողբայ իմ մահը։ Ես ինձ ամբողջապէս նուիրեցի աշխատաւոր ժողովրդի ազատագրական կռուին. իմ կողմից ոև է զիջումի մասին խօսք չէ կարող լինել բռնապետութեան առաջ, և եթէ կեանքիս բոլոր ձգտումների եզրակացութեան մէջ ես արժանի գտնւեցի բռնութեան դէմ ուղղուած համամարդկային բողոքի բարձրութեան—թող ուրեմն իմ մահը եւս պսակէ իմ գործը գաղափարի մաքրութեամբ։

Մեռնել համոզմունքների համար, կը նշանակէ հրաւիրել գէպի կռիւ և որքան էլ մեծ զոհեր պատճառէ բռնապետութեան հաշուեյարդարումը, ես միանգամայն հաւատացած եմ, որ մեր սերունդը ընդմիշտ վերջ կը տայ նրան։ Դա կը լինի սոցիալիզմի մեծ հանդէսը, երբ նոր կեանքի ասպարէզը կը բացւի ռուս ժողովրդի, ինչպէս և այն բոլոր ժողովուրդների համար, որոնք կրում են ցարի բռնութեան այն դարաւոր լուծը։

Բոլոր սրտով ձեզ հետ եմ, իմ սիրելի և անմոռանալի ընկերներ։ Դուք իմ նեցուկն էիք ծանր վայրկեաններում. ձեզ հետ ես միշտ բաժանում էի ձեր և թէ մեր բոլոր ուրախութիւններն ու տարակուսանքները, և եթէ երբ և իցէ կը յիշէք ինձ ընդհանուր ժողովրդական բերկրութեան գագաթին՝ թող իմ ամբողջ յեղափոխական աշխատանքը լինի ձեզ արտայայտութիւն այն խանդավառ սիրոյ, որ ես տածում եմ դէպի ժողովուրդը և այն ինքնավստահ յարգանքի, որ ունեմ ձեզ համար։ Ընդունեցէք այն՝ որպէս տուրք իմ անկեղծ մտերմութեան դէպի կուսակցութիւնը, դէպի այն կուսակցութիւնը, որ կարող է հանդիսանում «Նարոդնայա Վոլիայի» աւանդները բոլոր իրենց ընդարձակութեամբ։ Կուզէի վերջին անգամ յիշել անուններն այն բոլոր անձերի, որոնք անսահման սիրելի են, մօտ են իմ սրտին, բայց թող իմ վերջին տնքոցը լինի նրանց համար իմ միասս բարեւը և իմ խրոխտ կոչը դէպի ազատութեան կռիւ։

Գրկում եւ համբուրում եմ ձեզ բոլորիդ։

Ձեր Ի. ԿԱԼԱԵՎ

(Բէվ. Ռոս.)

«Դրօշակ»

ՏՕՔԻՈՒՄԱՆՆԵՐ

—○○—

Պալքանեան կեդր. կոմիտէի, Ռոստոմի, Վահան Մանուէլեանի, Անտոն Փօլի եւ Փ.ի յարաբերութիւնները Լեւոն Սարգսեանի եւ Վահան Շահրիմանի հետ տխրահռչակ նամակի դէպքից յետոյ։

Մենք Լեւոն Սարգսեանի մեզ յանձնած նամակներից հրատարակում ենք հատուածներ միայն, գաղտնիքները հրապարակ դնելուց խուսափելով, նրանք վերաբերում են կազմակերպութեան, որոնք ապացուցանում են թէ տխրահռչակ նամակից յետոյ, որը իմացվել է է անմիջապէս և Լեւոնից, Լեւոն և Շահրիման իրենց գիրքերի համեմատ վայելել են Ֆիլիպէի դաշնակցականների համակրանքը և վստահութիւնը, ու խնդիրը հրապարակ գալուց յետոյ իսկ խոստացել են նրան տալ պաշտօնական վկայական իր օրինաւոր դաշնակցական լինելու մասին։

Նախ քան նամակագրական յարաբերութիւնը, դէպքից յետոյ մի ամբողջ տարի Ֆիլիպէի ընկերները Լեւոնին ընդունել են իբր կենտր. կոմիտէի անդամ և վստահելի ընկեր։

Ահա այդ հատուածները քրոնիկական շարքով։

Հատուած Ռոստոմի Ռուսճուքէն Ֆիլիպէ ուղղված 1900 յուլիս 25 թւակիր նամակէն.

«Սիրելի Լեւոն,

. . . .

Կոմիտէն կազմակերպվելուց յետոյ կը

տեղեկագրի ձեր այժմեան կազմակերպութեան մասին . . . . . ցանկալի է որ դու Միաս կամ Ֆիլիպէ կամ թէ Վաքնա . եթէ ես ստացայ պաշտօն կամ մի այլ դիրքութիւն ձեռք բերի , այն ժամանակ կը բանանք մի երկու կարգեր կից մանկապարտէզին , ուր դու դասեր կուննենաս ։ Աշակերտներից եթէ քիչ էլ ստացվի հոգ չէ ։

Ներփակ նամակը խնդրում եմ յանձնել . . ին . առաջարկում եմ նրան եթէ ուրիշ խոչնդոտներ չը կան գնալ գործեալ կայարանները եւ սկըսած գործը աւարտել ։ Դուք էլ յուսով եմ հակառակ չէք լինիլ եթէ . . Նամակ լինի բաց արէք . կարդացէք և եզրութիւնը անմիջապէս ինձ հաղորդեցէք ։»

Քո Ռոստոմ

Լեւոնի Վառնա տեղափոխվելուց յետոյ Ռոստոմից ուղղված են հետեւեալ նամակները Ֆիլիպէից ։

1. «Այս նամակը այրիր , պատռիր . չը պահես քովդ ։ Այս տողերը գրված են նամակի ճակատին , որից բան չենք քաղում . որովհետեւ նրա բովանդակութիւնը ամբողջովին գաղտնիք է եւ այդպէս կարելի է գրել անպայմանօրէն վտանգելի կազմակերպական ընկերոջ ։

2. «1900 հոկտեմբեր 21 թւակրով նամակից քաղում ենք այս հատուածը .

«Է . այստեղ չէ . ծեծվելուց յետոյ ընկերական կամ պատւոյ ատեան պահանջեց . չուզենալով ընդունեցի նէմրուզի կողմից դատաւոր լինել . նրա կողմից էին Շահրիման եւ Բաղդերգլեան» ,

3 1900 նոյեմբեր 13 թւակիր նամակից .

—«Երէկ Սոֆիա էի . տեսնվեցայ նախագահ Սարաֆովի հետ , տւեց իր այցետոմսը որ ներփակ ուղարկում եմ քեզ . . . Այցետոմսը ներկայցրու ուսուցիչ Մ . եւ ասա թէ նախ եւ առաջ ինչ պէտք է անել , այդ մարդու հետ աշխատիր գաղտնի տեսնվել . նա գաղտնի կազմակերպութեան անդամ է Դրուժեսքիւից անկախ ։ . . .

«Սպասում եմ նամակիդ
Քո Ռոստոմ

Առանց թւակրի մի նամակ , նոյն տարէն

4. «Սիրելի Լեւոն

. . . .

Թէ Ա.ծ . սիրես , լուրջ հոգ տար , խմբերի հետ յաճախ տեսնվիր . . .

Գիտեմ ծանրաբեռնված ես , բայց եւ այնպէս խնդրեմ տեղւոյդ գործերու մասին գրիր ընդարձակօրէն ։

Քո տեղ հիմա Պ. է մեր մէջը

Քո Ռոստոմ»

5. Նոյն տարին առանց թւականի մատիտով գրված մի նամակ ։

Սիրելիս

. . . .

Քեզ մի մասնաւոր խնդրի վաչին բան էի գրել , ինչ եղաւ հետեւանքը . դուք ինչ էք կարծում ինչպէս յարմար կը դատէք , այնպէս արէք . Բայց առաջին տեղը պիտի բռնի . . . Ք.Ն ».

Անտօն Գօչի նամակը

1. 1900 նոյեմբեր 20

«Մեծ. Տ. Լեւոն Սարգսեան .

Առի չոր ու ցամաք նամակդ . աշխարհ իրար անցաւ բայց դուն բան մըն ալ չէիր գած նամակիդ մէջ . . . .

Կը բարեւեմ , կը սեղմեմ ձեռքդ ։

Անտօն Գօչ(*)

Վառնայի այնժամանակվան մի ազդեցիկ դաշնակցական Փ.ի նամակը ուղղված Լեւոնին Վառնայում ։

1. 1900 նոյեմբեր թւակիր ։

«Սիրելի բարեկամ

Պալքանեան կեդր. կոմիտէն պաշտօնագրով մը կը հրաւիրէ զիս տեղական կոմիտէին կազմակերպութիւնը փութացնել ու իբրեւ անդամ կը նշանակէ զձեզ , պ. պ. . . եւ զիս ։

. . . .

Գալով ինձ , ես կուզեմ քիչ մը ժամանակ քաշուիլ այն ամէն գործերէն եւ յարաբերութիւններէն , որոնք ազգային գոյն ունին ։ Կը միամ միշտ դաշնակցական մը իբրեւ ամաթէօր , այլ ոչ գործող . կօժանդակեմ ձեզ եթէ հարկը տեսնէք , բայց բարոյական պարտականութեան մը մէջ չեմ ուզեր ըլլալ ։ . . . .

Վերջապէս ձեզ կը թողում եւ ձենէ կը խնդրեմ որ հաճիք զբաղիլ կուսակցութեան այս խնդրովը ։

Անմիջապէս որ եղրակացութեան մը յանգիք , կը խնդրեմ որ ինձ լուր տաք , որպէսզի ձեզի յանձնեմ տեղական գիւանին հաշուետետրակը որ իր վախտ վիճակին մէջ խղճահարութեանս կը դպչի եւ որուն ճոխանալը ձեր բարեհաճութենէն կախում ունի ։

Սիրալիր բարեւներով բարեկամնիդ Փ.»

Վահան Մանուէլեանի նամակը

1. 1901 յունիս 8.

Լեւոն ,

. . . ին գրածը անփոփոխ հրատարակէ . հոս Ֆիլիպէի մէջ բաւական բաներ մը կը դառնան կոր ։ Թերեւս քիչ օրէն . երբ գործերս վերջացնեմ ընդարձակ գրեմ . . . .

Բարեւներով Վահան Մանուէլեան»

«Շարժում»ի մէջ Լեւոնի և Շահրիմանի խնդիրը հրապարակ գալուց յետոյ , Ռոստոմի 1902ի ապրիլ 4ին Լեւոնին գրած նամակից քաղում ենք հետեւեալը .

«Մենք (Կ. Կոմիտէն) պատրաստ ենք յայտարարել որ այդ դժբախտ դէպքից յետոյ դոյնանման ոչ մի ձըգտում չենք նկատել ձեր մէջ եւ որ դուք միշտ եղել էք օրինաւոր անդամ մեր կազմակերպութեան եւ նոյն իսկ պատրաստականութիւն յայտնել վտանգաւոր գործերի մէջ մանել ։»

ՎԵՐՋ

Մեր համոզումը եւ եզրակացութիւնը .

Լեւոնի և Շահրիմանի խնդիրը մէջտեղ նետված միջոցին մի յօդւած գրեցինք «Շարժում»ի 1901 թւականի 360 թւում «Ո՞ր է մաքրութիւնը» խորագրով , որ որ վերջացրել էինք այս տողերով ։ — «Յոկ վերակազմեալ Հընչակեաններին և Դաշնակցականներին առաջարկում ենք ման րակրկիտ կերպով խնդիրը քննել , որպէսզի մեղադրվողները , եթէ իսկապէս մեղաւոր են իրենց պատիժը ստանան և եթէ արդար մաքրվեն հասարակութեան առջեւ»

Նոյն թւականի 366 թիւ «Շարժում»ում «Վահան Շահրիմանի թուղթիկը» խորագրով յօդւածում մենք մեր կողմից չեզոքելով որ մատնված կարծվածները դեռ շատ առաջ կասկածված էին , ու դեռ ոչ մի միաս չէ պատահած նրանց միջամտութիւն տեղի ունենալուց յետոյ իսկ որ անկարելի է Թիւրքիոյ պէս Երկրում , վերջացնում էինք .

«Մենք ուրախ ենք որ մատնութիւնը չէ կատարված , ինչպէս պատմում են մեղադրվողները , բայց այդ տեսակ միտք յղանալն անգամ յանցանք է , ի հարկէ ոչ մատնելու չափ յանցանք . իսկ յղանալու մէջ ո՞վ է աւելի մեղաւոր , այդ Սարգիսեան ու Շահրիմանը իրենք իրենց մէջ կարող են պահել , ի հարկէ չեզոք մարդկանց ներկայութեամբ» ։

Այս երկու հատւածները և մեր կողմից մատնված կարծվածների վաղուց կասկածված լինելը և ոչ մի վտանգի չը հանդիպելն միջադէպից յետոյ մատնանշելը ապացոյց է որ դեռ այնժամանակ մենք հաստատապէս մատնիչներ չէինք ընդունել այդ երկու պարոններին ։

Դրանից յետոյ երբ մարմինները չարունակեցին լուռ մնալ , Շահրիմանը մնաց իր վայելած դիրքում , իսկ Լեւոնը վայելեց իր ընկերների համակրանքը և վստահութիւնը մեզ համար ապացոյց էին որ այդ խնդիրը իրօք այն չէր , ինչպէս որ ուզում էին ներկայացնել ։

Այս տօքիւմանների համառօտ միտքը և ընկերների կարծիքը իմանալուց յետոյ՝ մենք սկսեցինք կրկին որոշ չափով վստահել Լեւոնին դեռ երկու տարի առաջ ։

Իսկ այսօր , երբ այս տօքիւմանները իրենց ամբողջ մերկութեամբը մեր առջեւ են դրված ու արդիւնք են Ռոստոմի , Վահանի , Անտօնի գրչի՝ մենք համոզվում և եզրակացնում ենք որ այդ ընկերները անկարող էին վատ ճանչցված մարդկանց հետ այդքան մտերմօրէն , այդքան ընկերաբար վարվել , նոյն իսկ շատ կարեւոր գաղտնիքներ տալ մանաւանդ նամակի խնդիրը գիտենալուց յետոյ ։

Մենք անպայման հաւատում ենք Ռոստոմի , Վահանի ու Անտօնի խելքին և վճռողականութեանը վատ մարդկանց հանդէպ ու այստեղ այդպիսի բան չը տեսնելով մինչեւ օրս , Լեւոնի և Շահրիմանի դժբախտ միջադէպը մեզ համար վերջնապէս վերջացած ենք համարում , որոշելով նրանց հետ վարվել այնպէս , ինչպէս վարվում էինք խնդիրը դեռ հրապարակ չեկած միջոցին բաւ համարելով այն բարոյական պատիժը որը այսպէս թէ այնպէս նրանք կրեցին իրենց ուսերի վրա և որի անուղղակի պատճառը եղաւ «Շարժում»ը ։

Հակառակ պարագային մենք ստիպված պէտք է լինենք մտածելու որ մեր վերը յիշած ընկերները իրենց թոյլ են տւել մէկ վատ մարդի կազմակերպութեան կարեւոր մարմնի մէջ պահել , նրա հետ մինչեւ խնդրի հրապարակ գալը մտերիմ յարաբերութիւն պահպանել նամակներով , իսկ միւսի հետ յեղափոխական միջադէպի համար պատւոյ ատեան սարքել ։ Բայց այդ անկարելի է ։

ՎԱՐԴՕ

ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՇՈՒՐՋԸ

—○—

ՆԱԽԱՑԻՆ ՎԵՐՋԻՆ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ

Ասկէ ճիշդ հարիւր տարի առաջ էր որ անգլիացի հռչակաւոր «միաթեւ» Նէլսընը տարաւ ծովային յաղթանակ մը՝ կործք տալով երկու հզօր պետութիւններու՝ որպիսիներն էին նոյն ատենուան Ֆրանսան և Սպանիան՝ եւ դրոշմեց իր անունը անգլիական ծովային պատմութեան սարեգրութիւններուն մէջ այնպիսի կերպով , որ յաւիտեան անեղծանելի պիտի մընայ , իբրեւ հերոս Տրաֆալկարի ահեղ ու արիւնալի ճակատամարտին ։

Այդ , ինչպէս բսինք , դար մը առաջ էր , 1805 հոկտ . 21ին , ուր Ֆրանքօ-Սպանիական 33 նաւերէն մընացին միայն 16 , տալով միանգամայն 7000 զոհ , մեծ քանակութեամբ սպանուած եւ վիրաւոր թէ օֆիսէրներ եւ թէ նաւաղներ , եւ գերեալներու թւոյն մէջ երկու ծովակալ , իսկ անգլիական նաւերը , իրենց նոյնքան մեծ կորուստին հետ միասին վրայ տուին եւ Նէլսընը , որուն վերջին խօսքերը եղան . — «Անգլիան կակնկալէ որ՝ իւրաքանչիւր ոք պիտի կատարէ իր պարտականութիւնը . . .» Բայց եւ այնպէս , Նէլսըն յաղթանակեց ու այդ պատերազմը սահմանուեցաւ ըլլալ էն հզօրը , էն արիւնահեղը , է՛ն ճակատագրականը ու է՛ն պանծալին ծովային բաղխումներուն մէջ ։ Ու Մեծն Բրիտանիա ծովերու թագուհին ամբողջ դար մը պատիւ համարեց իրեն այդ կռուին անզուգականութիւնով եւ անհաւասարութիւնով պարծիլ . . .

Սակայն , մայիս 27—28 գերազանցօրէն նշանակելի օրը պահ մը կուգայ մոռցնել տալ հոկտ . 21 եւ Նէլսընը , ինչպէս նաեւ շարք մը յարակից դէպքերը ։ — «Թգուկ եւ աղուէսամիտ» Թօկօն է որ պիտի տիրապետէ այլեւս նաւային կռիւներով զբաղուող մըտքերուն վրայ եւ իր անզուգական ռազմագէտի տաղանդը , որ պատերազմին դեռ առաջին օրէն չը թերացաւ ցոյց տալ ։ Տրաֆալկար չէ այլեւս բայց՝ Ցուշիմա , Քորէական նեղուցը , ուր տարաւ Թօկօ յաղթանակ

(*) Ծ. Խ. — Պարոնին է պատմել Լեւոնը նամակի միջադէպը ։ Եւ այս պարոնն է՛ վերջը հրապարակ նետողը երկար ժամանակ մտերմական յարաբերութիւն պահպանելուց յետոյ!!!

մը որ երբէք նախորդը ունեցած չէր. Եօթը հսկայ մարտանաւեր, 2ի չափ ուրիշ զանազան կարգի նաւեր, 3000 գերի եւ . . . երեք ծովակալ, որոնց մէջ է նաեւ Ռօժտէսդվէնսկի, Ռուսաստանի ծովային յոյսն ու հաւատքը։

Թօկօյի կորուստներն ալ որոշուած են հիմա։ Քանի մը թօրփիլօներ, մէկ—երկու խորտակիչներ եւ 143 սպաննուած ու 470ի չափ վիրաւոր, որոնցմէ մէկ փոքրագոյն մասը միայն ծանր վիճակ մը ունի։

Ինչու այսքան յոյսերէ եւ ակնկալներէ վերջ, ռուսական նաւատորմը իր վրայ դրուած բովանդակ վստահութիւնը դերեւ հանեց.— Պատճառները այնքան բազմաթիւ են, որ դժուար է մէկիկ մէկիկ թուել այստեղ. Համառօտենք միայն գլխաւորները.—Ածուխի պակասութեան պատճառով Վլատիվօսթօք հասնելու համար ամենակարճ ճամբան Ցուշիման բռնելը է Ճաբոնական նաւատորմը իր բովանդակ ուժով այդ նեղուցին առջեւ սպասելուն անհաւանական են թադրումը։ Նաւերու երկարատեւ անգործութեան եւ անհոգութեան մատնուելով՝ անոնց մէկ կարեւոր մասին յատակները ցիցերով պատուած իսկ թնդանօթներուն ժանգոտած ըլլալը. որոնցմէ ոմանք երբէք կրակ չէն առած եւ ոմանք ալ կրակ առնելով ինքնին պայթած։ Եւ այս բոլորին վրայ ռուս նաւազներու նաւային կրթութեան թերութիւնը, ինչպէս նաեւ կռուելու դժկամակութիւնը—ապացոյց ճաբոնական նաւատորմին հասած չատ չնչին վնասը։ Ոմանք կը հաղորդեն որ, Նէպօկաթօվի նաւազները դեռ առաջին քայլէն իսկ մերժած են կռուիլ եւ հարկադրած ծովակալնին տեղի տալ առանց դիմադրական նշան մը ցոյց տալու։ Միակ նաւը, որ կրցած է քիչ մը ընդդիմութիւն ցուցնել, այդ ալ եղած է Ռօժտէնսվէնքիի դրօշակակիր մարտանաւը, թէեւ այդ եւս ոչինչէ յանգած, շնորհիւ ճաբոնական թօրփիլօներու կատաղի կրակումներուն, որ կտրիճեն կէս մը վիրաւոր Ռօժտէնսվէնսքին թողուլ իր նաւը՝ Բնեազ Սուվօրով եւ անցնիլ ուրիշ մը, որ նոյնպէս կործանման մէկ նոյն բաղդին եւ երբ ճաբոնացւոց ձեռքը կիյնայ, ռուս ծովակալը կը գտնուի նաւուն մէկ խուլ անկիւնը, մարմնոյն չորս ծանր վէրքերէն արիւնը հոսելով... Եւ այժմ ան կը գտնուի Սասէպօյի մէջ ճաբոնական հովանաւորութեան ներքեւ, Միքատօյի Արեւածագին ծածանուտ ծալքերուն տակ։

Առաջին հարցէն վերջ. սակայն կը ծագի երկրորդ մը.— Ինչու յաղթանակեց Թօկօ, եւ այդ այնքան փառք ապացոյցով։— Որովհետեւ իր նաւատորմը կատարեալ ու պատրաստ վիճակի մէջ. որովհետեւ իր թաքթիքները գործ դնելէ առաջ՝ չը պարզեց թշնամիին, կարելի եղածին չափ գաղտնի պահեց իր ուժն ու նաւատորմին քանակը եւ, է՛ն կարեւորը, կռողները ունէին անպարտելի եռանդ եւ հիացուցիչ նաւային պատերազմի կրթութիւն։

Եւ ահա յաղթութիւնը չուշացաւ։ Այսօր Հեռաւոր Արեւելքի ծովուն թագաւորն է Թօկօ։ Իր նաւերը ազատ ու աներկիւղ կրնան երթեւեկել։ Մնացած է միայն Վլատիվօսթօքն ու չորրորդ նաւատորմը։ Առաջնոյն հրամանատարութիւնը ձեռք առնելու համար ճամբայ ելած է Պիրիլէվ. իսկ վերջինը պիտի ճանապարհ ելլէ յունիսի վերջերը, որուն պիտի յաջորդեն քանի մը վերջին սիստէմի մարտանաւեր, որոնք կառուցման մէջ են Րիկայի վրայ։

Ինչ որ ալ ըլլայ այսուհետեւ. Թօկօյի դրութիւնը, ան արձանագրեց անուն մը, որ ոչ միայն իր ժողովրդին, այլ եւ բովանդակ աշխարհի նաւային պատմութեան մէջ անմեռ ու յաւերժայուշ պիտի մնայ, իբրեւ խելացի, ռազմագէտ, ճարտար եւ բանիբուն ծովակալ մը։ Աւա՜ բաղդատակալէս անուրանալի ճշմարտութիւն մըն է։

Կենդանի օրինակով մը ապացուցանելու համար թէ 18 ամսուան ընթացքին ինչպիսի հսկայ ռեֆօրs մը ունեցած են Թօկօյի յաղթական ջախջախումները, ներքեւ առաջ կը բերեմ պատերազմի առաջին օրէն մինչեւ վերջին Ցուշիման՝ ռուս նաւատորմին կրած վնասները, իբրեւ կարեւոր տօքիւման մը, հիմնուելով օրէ օր եւրոպական թերթերու մէջ հաղորդուած եւ ստուգուած լուրերու վրայ։ Ընդհանուր թիւը կը կազմէ 78։

Ասոնցմէ 33ը զանազան երկրորդական դեր ունեցող նաւեր են, իսկ մնացեալ 45 բաժնուած են հետեւեալ կարգով, որոնց առջեւ նշանակած ենք ընդհանուր ծանրութիւնը, կորսուած թնդանօթներու թիւը եւ քանի հատ լինելը։

15 գլխաւոր մարտանաւ (2 հատէ զատ բոլորը ընկղմուած) պարունակելով 223 թնդանօթ եւ ընդհ. ծանրութիւն 780,000 թօն.

5 Սզերապահ նաւեր (2 գրաւուած) ունենալով 15 թնդանօթ եւ 15362 թօն ծանրութիւն։

6 զրահակիր չարժանաւեր, բոլորը ընկղմուած, միասին 85 թնդանօթ և ընդհանուր ծանրութիւն 46 687 թօն։

9 Պաշտպանեալ չարժանաւեր, որոնցմէ 7 ընկղմուած եւ երկուքը անգործածելի դարձուած, 71 թնդանօթ ու 46,165 թօն ռանրութիւն.

10ի չափ մասնաւոր նաւեր եւ հրետանաւեր, որոնք այս կամ այն կերպով խորտակուած են։ Իսկ այս ընդհանուր 78ին վրայ 42 ուրիշ մանր մունր թօրփիլօ եւ այլ կարգի ոչ կարեւոր նաւեր։

Այս հաշիւէն բոլորովին դուրս են պաշարի, ռազմամթերքի եւ այն ամեն կարգի պէտոյքները, որ անպայման էական են այդ նաւերուն համար։ Դուրս են նաեւ հազարաւոր կեանքերը եւ մասնաւորապէս Մաքարով որ իր Բեթրօբավլօվսկ նաւուն հետ անցեալ տարի ապրիլ 6ին ընկղմեցաւ։

Նաւային յօդուածագրի մը կարծը, որ կը կարդայի անցեալները, կը յայտնէր թէ՝ ընդունելով նոյնիսկ էն վար միջին հաշիւն իւրաքանչիւր թօնի վրայ իբրեւ 100 ոսկ. ստերլինք այդ կերպով Ռուսաստանի 18 ամսւայ լոկ նաւային նիւթական տեսակէտով կրած վնասը կը հասնէր 30 միլիոն անգլ. ոսկիի... Սակայն ատի դեռ իրականութեան մինիմումն անգամ չէ կարելի համարել։

Դիտենք թէ 15 մարտանաւերուն մէկ կարեւոր մասը, եւ մասնաւորապէս Մաքարովի տուածներէն 2—3 Ռօժտէնսվէնսքիէն 3—4 ամենավերջին սիստէմով կառուցուած նաւեր ըլլալով՝ իւրաքանչիւրը կարժէր առնուազն 3—3½ս միլիոն անգլ. ոսկի և այդ 15էն քանի մը հատը միայն 1 միլիոնէն վար արժողութիւն ունէին։ Ուրեմն այդ հաշւով՝ լոկ 15 մարտանաւերը արդէն կը պարկնն 25—30 միլիոն ոսկիի հաշիւ մը։ Աւելին ինքնին կարող է եզրակացնել ընթերցողը։

Ահա թէ ինչպիսի վատթար ոճրագործութեան մը պատասխանատու կը հանդիսանայ ցարիզմը. ահա թէ ուր կիրթան ժողովրդին արդիւնքով ու քրտինքով յառաջ բերած դրամները։

Մ. ՑՈԼԱԿ

ՆԱՄԱԿ ԱՄԵՐԻԿԱՅԷՆ

Նէշուէլ 4 Յունիս 1905

Մայիս 28ի կիւրակէն յիշատակելի օր մը եղաւ գաղութիս տարեգրութեան մէջ, ազատութեան հերոսներու յիշատակին Հայ Յեղ Դաշնակցութեան տեղւոյս կոմիտէի սարքած սգահանդէս-ժողովին շնորհիւ։ Ինչպէս գրած էի նախորդ թղթակցութեանս մէջ։ Քրիստափոր Միքայէլեանի եւ Եդուարդի տարաբախտ մահը ցնցեց բովանդակ հայութիւնը եւ ուրիշ հայ գաղութներու հետ Նէշուէն ալ կուգար իր յարգանքի յիշատակը նուիրել գաղափարի այդ մեծ ախոյեաններուն. յարգանքի անհուն սիրով մը երկսեռ խուռն բազմութիւն մը լեցուած էր սրահը։ Սովորականէն բոլորովին տարբեր անսարան մըն էր որ կը պատկերանար ժողովրդին առջեւ՝ սրահը ոսուն ճակատը խաչոր գրերով գրված էր Սասուն, ու անոր տակը Հրայր, Վահան, Թորգոմ, Կաղարշակ եւ Երկաթ անունները, որ կը յիշեցնէր Սասուն եւ իր քաջամարտիկ հերոսները. իսկ անոնց ճիշդ տակը գրված կար Քրիստափոր եւ Եդուարդ անունները որ կը յիշեցնէր Սօֆիայի դժբախտ աղէտը եւ այս բոլորին աջ ու ձախ կողմերը գրուած էին Տարօնի առիւծ Սերոբի ու Վազգէնի եւ Պետոյի ու Բաբկէնի նկարները սեւ շղարշներով զարդարուած, իսկ Խանասօրի դիւցազն Կարօյի ու Մայր Հայաստանի նկարները ալ կախուած էին անոնց քիչ հեռու եւ այս բոլորին տակը գրուած կար հետեւեալ պարբերութիւնը՝

«Յարգանք ձեզ սրտի մարգիկ. ձեր անշնչացած դիակներու առջեւ խոնարհում ենք մեր գլուխները։ Մի սիրտ ունէիք այն էլ զոհ բերիք ժողովրդի ազատութեան սուրբ գործին։

Ընկաք որ ձեր մատաղ արիւնով ոռոգուած Մայր Հայրենիքը ծլի ու ծաղկի. մեռաք որ մի ամբողջ ժողովուրդ ապրի։

Յարգանք ձեզ հայ ազգի ռահվիրաներ»

Մասնաւոր թուղթի մը վրայ հրատարակուած էր ժողովին մանրամասն յայտագիրը եւ որուն ճակատը գրուած էր Դաշնակցութեան զինանշանը՝ ու անոր ճիշդ տակը Քրիստափորի նըկարը. իսկ նկարին երկու կողմը Հայ-գուսանի ոտանաւորներէն երկու կտոր, որը կարժէ հոս մէջ բերել։

Ախ թէ լինէի կայծակ հրաբուխ
Մռայլ Տաւրոսի ճակատից վիժած,
Պիտի փչէի, չանթէի պիտի,
Թշնամու կուրծքը չար, արիւնախանձ.
Բայց հոգումս օձեր են զեռում,
Վրէժի թթիր—սեւ, կծիկ-կծիկ,
—Ու ռումբ է սիրտս եւ պիտի պայթի.
Թշնամու գլխուն նա պիտի պայթի։

Ամէն մէկ ժողովական օրինակ մը ունէր իր ձեռքը։ Ժողովը բացուեցաւ «Տուր ձեռքդ Եղբայր» երգով ու ատենապետ ընկեր Ց. Շաղոեան քանի մը ազդու եւ խրախուսական խօսքերով բացատրեց հանդէսին նպատակը եւ վեր հանեց Քրիստափորի ու Եդուարդի նմաններու իսկական արժանիքը։ Երգեցին խումբը «Թող կորնչին Տաճիկները» երգելէն յետոյ՝ Մուրատ Ռափայէլեան վարժարանի սաներէն ընկեր Արիս խնամքով պատրաստուած զանազան չէշտերով գրաւոր ճառ մը կարդած. որ կը ցոլացնէր այն գեղեցիկ ու մաքուր հոգին որ Քրիստափորը ունէր իր մէջ մեր ընկերը կը չէշտէր այն մեծ կորուստը զոր ունեցաւ հայ ազգը Քրիստափոր Միքայէլեանի մահովը. պէտք է կըսէր «որ ամէն հայ անխտիր իր գլուխը խոնարհեցնէ Քրիստափորի արիւնոտ գերեզմանին առջեւ եւ յարգէ անոր սուրբ յիշատակը» ժողովականներ միահամուռ ծափահարութիւնով մը իրենց գոհունակութիւնը յայտնեցին մեր ընկերոջ.

Ընկեր Մ. Աղբօտ երգեց «Լռեց ամպերը» ու ապա բեմ բարձրացաւ առաջին ատենախօս ընկեր Մ. Ն.եան եւ բացատրեց թէ մինակ հայերս չենք որ մեր հերոսները եւ անոնց յիշատակը կը յարգենք. ամէն ազգ ալ կը տօնէ ու կը յարգէ. փոխանակ սգահանդէսներով տօնելու եւ ողբալու՝ պէտք է ուրախութիւնով տօնենք իրենք եւ յարգենք անոնց սուրբ յիշատակը. մի քիչ շեղելով օրուայ նպատակէն, ծանրացաւ աւելի ոչ կուսակցականներու այն անմիտ առարկութեան թէ «ինչու չէք միանար» ու ապա կենդանի փաստերով ցոյց տուաւ որ հայ յեղափոխականը միշտ միացած է. այսօր հայ ազգին մէջ չկան կուսակցութիւններ՝ ճիշդ է անունով կան, բայց գործքով ոչ, երկիրը յեղափոխական գործ մը կայ՝ ով որ այդ գործը յառաջ կը տանէ՝ ան է հայ յեղափոխականը ու անոր կուսակցութիւնը է յեղափոխական կուսակցութիւնը, Երկրին մէջ գործող յեղափոխական կուսակցութիւնը Հ. Յ. Դաշնակցութիւնն է, հետեւաբար ան է միայն յեղ. կազմակերպութիւնը։ Շեշտեց թէ ամէն հայ բարոյական պարտականութիւն ունի օգնելու իր հայրենիքին, հայ հարուստը արդէն յայտնի է չօգներ մեզի, որովհետեւ իրեն կաշին հանգիստ է. մեզ՝ գործաւոր ու ռամիկ դասակարգին վրայ կը ծանրանայ ազգային լուծը, լծուինք այդ սայլին եւ միշտ յառաջ սանինք զայն։

Օրիորդ Ե. Գուլթանեան լիահնչուն առոգանութեամբ արտասանեց Քամառ Քաթիպայի "Ինչ անենք"ը, յուսահատողներու, լքուածներու, անտարբերներու ու քարսիրտներու կոչ մըն էր ասիկայ, քանի՞ մարդիկ պիտի կրնան հասկնալ զայն, արդեօք։

Հայդուկային երգէ մը ետք խօսեցաւ ընկեր Արամ-Աշոտ եւ ուրուագծեց Քրիստափորի կեանքին մէկ քանի աղուոր գծերը, եւ յայտարարեց թէ բոլոր ազգեր կը խոնարհին իրենց հերոսներուն առջեւ եւ կը յարգեն զանոնք, Անգլիան կը յարգէ Նելսընը իսկ Ամերիկան Վօշինկթընը, հարկաւոր է որ մենք հայերս ալ ճանչնանք մեր քաղաքացիական պարտականութիւնը ու յարգենք մեր հերոսները. Ու ապա շեշտեց այն կէտը թէ պէտք է միշտ ձգտում մը ունենանք դէպի իտէալը ու դէպի

յառաջդիմութիւնը. դառնալով դէպի չեզոքները ըսաւ որ անխղճութիւն է բոլորովին անտարբեր նստիլ եւ բաղդատել որ ամէն բան յեղափոխականները ընեն, չէ՞ որ իրենք ալ հայ ու միեւնոյն հայրենիքի զաւակներն են, ու իրենց վրայ կը կրեն Թրքական լուծը, ժամանակն է որ ամէն հայ ջանայ իր կրցածը ընել. Հայրենիքի շահերը կը պահանջեն որ ամէն մարդ մէկզի ձգէ անտարբերութեան սեւ քօղը եւ գայ միանայ յեղափոխական բանակին, որովհետեւ ան է միայն որ մեզի դէպի փրկութիւն պիտի առաջնորդէ. «Կեցցէք տղերք» աղաղակով ժողովը փակուեցաւ, եւ ժողովուրդը մեկնեցաւ չինիչ տպաւորութեան մը տակ. Իր սիրտին մէջ պահելով այդ օրուայ յարգանքի գեղեցիկ յիշատակը.

* * *

Նիւ Եորքէն հոս եկող բարեկամէ մը իմացայ որ՝ հոն տեղի դաշնակցական կոմիտէն եւս սգահանդէսով մը իր յարգանքը յայտնած է անմոռացելի Եգուարդին ու Քրիստափոր Միքայէլեանին, սգահանդէսը շատ լաւ անցած է՝ խօսած էին ընկեր Արամ-Աշոտ, Ղարա-Մելիք եւ ուրիշներ.

Երուանդ-Նարոս

ՄՈՍԿՈՒԱՅԻ ԶԵՄՍՏՎՕՅԻ ՑԱՐԻՆ ՈՒՂՂԱԾ ՈՒՂԵՐՁԸ

«Աչքի առջեւ բերելով Ռուսիոյին եւ ձեր գահին մեծ դժբախտութիւններից գալիք վտանգը՝ դէպի ձեզ տածած ջերմ սիրուց դրդված՝ մենք հակառակ իրարից բաժանող պայմանների, որոշեցինք ուղղակի ձեզ դիմել.

«Տէր, Ռուսիան ոճրագործ եւ անհոգ մարդկանց ձեռքով, որոնք ձեր խորհրդականներն են, հրապուրվեց մի դժբախտ պատերազմով.

«Մեր զօրքը անզօր է թշնամուն յաղթելու եւ մեր նաւատորմիղը ոչնչացած է.

«Արտաքին վտանգներից աւելի սարսափելին է քաղաքական ներքին պատերազմն է. Դուք, ամբողջ ժողովրդի հետ միասին, խոստովանելով տգէտ եւ վտանգաւոր բիւրոկրատիայի սխալը, որոշեցիք այն բարւոքել մի շարք միջոցներով. Սակայն ձեր այդ նախաձեռնումը խեղանդամվեց եւ անհրաժեշտ իրականացումը չունեցաւ. Անհատների եւ հասարակութեան ճնշելու եւ ազատ խօսքի բռնաբարման միջոցները աւելի շատացան.

«Ձեր կողմից պետութեան պաշտպանութեան եւ վարչական միջակութիւնների համար հրահանգված փոփոխութեան փոխարէն ոստիկանութեան իշխանութիւնը ընդարձակվում եւ անսահման է դառնում.

Իշխանութիւնները կտրում են ձեր հպատակների ճամբան դէպի ձեզ, որ դուք բացել էիք ճշմարտութիւնը գիտակցելու համար.

«Դուք որոշեցիք ազգային ներկայացուցիչների ժողով գումարել հայրենիքի գործերը բարեփոխելու համար, բայց ձեր խօսքը մնաց անհետեւանք, հակառակ նրան որ սպառնական անցքերը բազմանում են.

Հասարակութիւնը յուզված է այն տարածված լուրերով, որոնց հիման վրայ դասակարգային խորհրդակցութիւններով պիտի փոխարինվի այն ազգային ժողովը որը պիտի փոխարինէր բիւրոկրատիային կազմակերպութեան.

Տէր, քանի դեռ ուշ չէ, Ռուսիոյ հանգստութեան, երկրի մէջ կարգն ու կանոնը վերահաստատելու համար անմիջապէս հրամայեցէք ձեր բոլոր հպատակների անխտիր ներկայացուցիչներից ազգային ժողով գումարել. Թող նրանք ձեզ հետ համաձայնելով որոշեն պատերազմի եւ հաշտութեան կենսական հարցը. Թող նրանք որոշեն հաշտութեան պայմանները կամ թէ մերժեն ներկայ պատերազմը ազգային վնրածելով:

Թող նրանք աշխարհին հանդիսացրեն ներքին խռովութիւններով չի զատված եւ չը հիւծված միաձոյլ Ռուսիա, ընդհակառակը ուժեղ միութեամբ եւ համախմբված ազգային դրօշակի տակ. Թող նրանք ձեր համաձայնութեամբ, վերստեղծեն վերանորոգված պետութեան կազմակերպութը.

«Տէր, ձեր ձեռքումն են գտնվում Ռուսիոյ պատիւը, ուժը եւ ներքին խաղաղութիւնը. ձեր ձեռքումն է ձեր կայսրութիւնը որ ժառանգել էք ձեր պապերից. Մի՛ յապաղէք տէր, որովհետեւ ազգային փորձութիւնների այս սարսափելի վայրկեանում ձեր պատասխանատուութիւնը մեծ է թէ Աստուծոյ եւ թէ Ռուսիոյ առջեւ»:

* * *

Պետերբուրգից հաղորդում են որ բարձրագոյն կառավարութեան հրամանով ներքին գործոց նախարար Բուլիգին եւ օգնական Տրէպով այս յանդուգն ուղերձը մատուցանելու համար Պետերբուրգ գնացած պատգամաւորներին յայտարարել է որ ցարը չէ կարող ընդունիլ. Եւ ամենից լաւը այն կը լինի որ շտապեն Պետերբուրգից հեռանալ.

ԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Վառնայի երկոտ հայ հասարակութիւնը կը հրաւիրուի ներկայ գտնուիլ լսարանական երկրորդ ժողովին, որ պիտի գումարուի յառաջիկայ կիրակի 5 յունիս կէսօրէն վեր ժամը երկուքին, գպրոցին սրահին մէջ.

Ուր պիտի բանախօսէ Պարոն Ս. Հինտլեան.—Նիւթ—Մեր վարժարանները, մեր Պուլկարահայ պահանջները, կրթական իշխանութիւնները և Պուլկարահայ ուսուցչութիւնը.

Որպէս զի սոյն կարեւոր և կենսական խնդրոյ վրայ վիճաբանելու և կարծեաց փոխանակութիւն ընելու ժամանակ ըլլայ, այս ժողովին համար միայն մէկ ատենախօս նշանակած ենք, նիւթը շահեկան և ընդարձակ ըլլալուն համար.

Ի դիմաց Հայկ. Ընթ. Վարչ
Ատենադպիր Ատենապետ
Յ. Թ Արապեան Օ. Օհանեան
Վառնա 3 Յունիս

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐՔԻԱ

Յունիս 2ին Պոլսէն կը հեռագրեն թէ, քանի որ պետութիւնները, մասնաւորապէս Անգլիա չընդունեցին Բ. Դրան և Պանք Օթոմանի Մակեդոնիոյ ելեւմտից քոնթրոլի ծրագիրը, պանքան իր 12 պաշտօնեաները Մակեդոնիայէն ետ կանչեր է.

— Անցեալ կիրակի և երկուշաբթի օր Պոլսոյ մէջ սարսափելի ցիկլոն երեւցեր, ու յետոյ զօրաւոր կարկուտ և անձրեւ տեղացեր է. Պէշիկթաշ Եըլտըզին քովերը տուներ քանդուեր են, մեծ քանակութեամբ պատուհաններու և ապակիներ կոտրուեր են. Այասօֆիայի մէկ մինարէն փլեր է. Մօտ չորս հարիւր մարդու կորուստ կայ. Պոլսոյ հին բնակիչներն անգամ այդպիսի բան մը չեն յիշեր.

ՌՈՒՍԻԱ

Բեթերսպուրկէն յունիս 1ին կը հեռագրեն որ Ուիթէ հոն պիտի մնայ մինչեւ վաքանսները. լուր կը պտտի որ շուտով պիտի հրաժարին շատ բարձր պաշտօնեաներ.

— Պաքուէն յունիս 2ին կը հեռագրեն.

«Կասպիյ» թերթը կը հաղորդէ որ հայերը մասնաւոր տան մէջ կոտորեր են բազմաթիւ մահմետականներ, կախեր են 12 հոգիի չափ էրիկ, կնիկ և երեխաներ ու վերջը ռումբ նետեր են տան մէջը.

— Երեւանի նահանգը պատերազմական դրութեան մէջ յայտարարուած է.

Նահանգին մէջ այրուած ու կողոպտուած թիւրք գիւղերու բընակիչները Բագուի հայրենակիցներէն օգնութիւն կը խնդրեն և փոխարքայէն կը խնդրեն որ Երեւանը զինուորական դրութեան մէջ դրուի.

— Մասնաւոր հրամանով մայիս 30ի երեկոյին վրաց հոգեւորականութիւնը մասնաւոր համագումար պիտի ունենար վրաց Սեմինարի մէջ. Երեկոյեան կարգիլուի այդ ժողովը. քահանայ մը ժողովին հասնելով կը ձերբակալուի ոստիկանի մը կողմէ. բայց յանկարծ սարճանակի պայթունով ոստիկանը կսպաննուի և քահանան կազատի.

ՅՈՒՆԱՍՏԱՆ

— Յունիս 1ին Աթէնքէն կը հեռագրեն որ նախարարապետ Տէլիանիս Երեսփոխանական խորհրդարանը մտած պահուն գաշոյնի հարուածով մը սպաննուեցաւ Քօրա Քարիս անունով անձի մը ձեռքով. Տէլիանիս օբէրասիոնի ենթարկուելով քանի մը վայրկեան միայն ապրեր է.

Մարդասպանը երկար ժամանակ բանտը պառկած մէկն է. ազատուելէ վերջն ալ խաղատուն կըռնէր և սպանութիւնը գործեր է, որովհետեւ վերջերս օրէնքմը Տէլեանիս քուէարկել տուեր էր խաղարանները գոցելու համար.

ՌՈՒՍ—ՃԱՊՈՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

Մանչուրիոյ ռուս սպայակոյտը Ցարին հեռագրած է որ հաշտութեան ժամանակը չէ. իրենք ապահով են որ այս անգամ պիտի յաղթեն և հայրենիքը ազատեն ստորնացուցիչ հաշտութենէ մը. Այդ հեռագրին տակը ստորագրած են. գլխաւոր հրամանատար Լինեւիչ, զօրաբանակներու հրամանատար՝ Քուրաբաթքին, Կաուլբարս, Բատեանով. սպայակոյտի պետ Սախարով.

Ժէներալներ, Րէնէնկամֆ, Զարուբաեվ, Պիլտէրլինգ, Լվով, Սամսոնով, Դանիլով, Կոպֆ.

—Ծովակալ Նեբոգաթով անձնապանութեան փորձ ընելէն յետոյ, խելագարութեան նշաններ կը ցուցնէ.

—Ռօժտէնստվէնսքիի վրան վիրաբուժական գործողութիւն կատարուելով աջ ոտքը և ձեռքը կտրեր են. Կսեն որ հիմա կեանքը փրկուած է.

ԱԶԴ

Աղքատ. Ընկեր. Գործ. Ժողովս կուգայ հրապարակաւ յայտարարել թէ Ընկերութեանս ինպաստ սկսած է գանձանակ մը շրջաբերել հաւաքիչ պ. Հ. Քիրիշեանի ձեռամբ. Եւ կը խնդրէ որ ամէն անհատ անխտրօրէն մասնակցի սոյն բարենպատակ գործին որուն համար կանխաւ մեր շնորհակալիքը.

Այս առթիւ նաեւ կուգայ խնդրել այն արգոյ ազգայիններէն, որոնք ինքնաբերաբար փափաքած են ընկերութեանս ամսական վճարում մը ընել, հաճին ըստ առաջնոյն վճարել հաւաքչին, ստանալով իրենց ընկալագրերը, որպէս զի Գործ. Ժողովս կարենայ միշտ նպաստել իրեն դիմող աղքատները.

Ի դիմաց Աղքատ. Ընկեր.
Ատենադպիր Ատենապետ
Յ. Ազապլար Մ. Պարագաշեան

Շումլայի «Պետօ-Պուլկարացի» ընթերցարանին մէջ կը ծախուի Հայ Ցեղ. Դաշնակցութեան բարձրաքանդակ ոսկեզօծ զինանշանը գանէ խիստ չքեղ պատրաստուած 49—43 սն. մեծութեամբ, Արձանագործ Պ. Խորէն Փափազեանէ, որ գեղարուեստական գնահատելի գործ մըն է.

Կարժէ որ ամէն հայ ու Դաշնակցական ընկեր ունենայ ան իր սենեակին մէջ.

Գինն է 10 ֆրանք կանխիկ. դիմել Շումլայի „Պետօ-Պուլկարացի„ ընթերցարանի վարչութեան.

Печатница на П. Глушковъ и С-ие, Варна